ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-184-2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» «04» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Բուն» գիտամշակութային հիմնադրամը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Գեմաֆին Գասպարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ և ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 28-ի 441-Ն որոշումը՝ որոշման «1168. Արվեստների ծրագրի» «11026. Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակի հոբելյանական միջոցառումների իրականացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Փարաջանովը և մենք» նախագիծը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և (կամ) ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի

վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծախսերի նախահաշվի նախատեսված ինստալյացիոն սեղանները (ներկառուցված մոնիտորներով) հաշվառել կազմակերպության հաշվեկշռում,

2.4.14. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև **«Գնումների մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.15. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է **18261.6** հազար (տասնութ միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ

նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024 թ. դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 10-ը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն

հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:
6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:
6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Բուն»գիտամշակութային հիմնադրամ
ք Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Մաշտոցի 40ա, բն. 34
Կառավարական տուն 2	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 1930049723220100 ՀՎՀՀ 02623069
Հ/Հ 900011052785 ՀՎՀՀ 02698732	Հեռ՝ 077110027
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Հ. Հակոբյան	Գ. Գասպարյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«15» «04» 2024 թ.
N ՄՇԴ- 184 -2024 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ
ՓԱՐԱՋԱՆՈՎԸ ԵՎ ՄԵՆՔ

	Կազմակերպության անվանում	«Բուն» գիտամշակութային հիմնադրամ
	Կազմակերպության գտնվելու վայր	Բաշինջաղյան 133, Երևան 0031, ՀՀ
	Ծրագրի անվանում	«Փարաջանովը և մենք»
.1	Բովանդակություն	Սերգեյ Փարաջանովի հարյուրամյակը նախևառաջ կարևոր առիթ է նրա արվեստը մեր հասարակության լայն շերտերին մոտեցնելու համար: Փարաջանովին նվիրված ուսումնասիրություններն ու աշխատություններն առանցքային կարևորություն ունեն, բայց պարզ և հանրամատչելի զրույցների, նրա արվեստի մեկնությունների սակավության պատճառով Սերգեյ Փարաջանովը ստացել է էլիտարի, իմացության մեծ պաշար ունենալու դեպքում միայն հասկանալի լիենելու համբավ, այնինչ նրա արվեստը և ինքնին իր էությունն հակընդդեմ են այդ կաղապարներին: Այդ մտայնությունն է համախմբել «Փարաջանովը և մենք» հաղորդաշարի նախագծի համահեղինակներին, որոնց թվում են Փարաջանովի ընկերներ և իրենց գիտական գործունեության ընթացքում Փարաջանովի արվեստի ուսումնասիրությամբ ակտիվորեն զբաղված ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու ***Լևոն Աբրահամյանը*** և կինոգետ, կինոռեժիսոր ***Գարեգին Զաքոյանը***: Հաղորդաշարի երրորդ համահեղինակը կինոքննադատ ***Ռաֆֆի Մովսիսյանն*** է: Հաղորդաշարը բաղկացած է լինելու 12 թողարկումից հետևյալ թեմաներով՝ 1. Ձայնը Փարաջանովի ֆիլմերում, 2. Նռան գույնը, 3. Փարաջանովը և արվեստագետի ճակատագիրը ԽՍՀՄ-ում, 4. Ազգայինը Փարաջանովի կինոյում, 5. Փարաջանովի ֆիլմերի պոետիկան, 6. Փարաջանովը և նրա հանդիսատեսը, 7. Փարաջանովի գեղակնարչությունը, 8. Արվեստագետը բանտում, 9. Փարաջանովը տանը և փողոցում, 10. Փարաջանովի սոցռեալիզմը,

		11. Փարաջանովի չիրականացված ֆիլմերը, 12. Փարաջանովը և գրականությունը: Ինչպես իսկ երևում է հեղինակների կողմից առաջարկված թեմաներից, հաղորդաշարի նպատակներից է համապարփակ ներկայացնել ոչ միայն Սերգեյ Փարաջանովի արվեստը, այլև նրա միջոցով այն ժամանակաշրջանն ու միջավայրը, որում ապրել և ստեղծագործել է Փարաջանովը: Անձնական հիշողությունները և դեռևս չհրապարակված փաստերն ու դեպքերն առավել չափով կնպաստեն՝ Փարաջանովին մեր իրականությանը մոտեցնելուն և այդ մոտեցման շնորհիվ ինքներս մեզ հասկանալուն: Յուրաքնչյուր թողարկումն իրենից ներկայացնելու է միևնույն կոլորիտային միջավայրում անցկացվող ազատ ֆորմատի զրույց, որի դեպքում առանցքայինը ոչ թե հաղորդաշարի տևողությունն ապահովելը (հաղորդաշարը չի ունենալու ֆիքսված տևողություն), այլ քննարկվող նյութի բովանդակային էությանը և որոշակի ընդհանրացումների հասնելն է: Հաղորդաշարի հեղինակներից զատ յուրաքանչյուր թեմայի քննարկման համար հրավիրվելու են տարբեր սերունդների և մասնագիտությունների երկուական բանախոսներ կամ որ այս դեպքում առավել համահունչ է՝ զրուցակիցներ: Հաղորդաշարի իրականացման համար նախատեսում ենք բարձր որակի տեխնիկական ապահովություն, տարբերվող գեղագիտություն և ռեժիսորական մոտեցում՝ սեղանի շուրջ մտերմիկ զրույցը կենցաղայնությունից կտրելու և բարձրորակ հեռուստանախագիծ ստանալու համար: Փարաջանովը և մենք նախագծի ոճն առավել հասկանալի դարձնելու համար մենք գտել ենք արտասահմանյան առցանց հաղորդաշարի հեռավոր օրինակ, որը կարող եք դիտել հետևյալ հղումով՝ https://youtu.be/oePVi-kZUlk: Հաղորդաշարի յուրաքանչյուր թողարկման ավարտին նախատեսում ենք Փարաջանովի ֆիլմերից որևէ մեկի ցուցադրությունը, հնարավորության դեպքում նախատեսում ենք ամբողջական ֆիլմոգրաֆիայի հետահայաց ցուցադրություն: Հաղորդաշարի նկարահանումը նախատեսված է մեկնարկել 2024թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին: Հաղորդաշարը կցուցադրվի ԲունTV-ի 2024թ. աշնանային եթերաշրջանում: Նախագծի ընդհանուր տևողությունը կկազմի 7 ամիս, նախագծի գործողությունները կավարտվեն 2024թ. նոյեմբերին:
3.2	Նպատակ	«ՓԱՐԱՋԱՆՈՎԸ ԵՎ ՄԵՆՔ» հաղորդաշարի նպատակն է Փարաջանովի արվեստը հանրության լայն շերտերին առավել հասկանալի դարձնելը և ազատելը «էլիտար» արվեստ պիտակավորումից:
3.3	Անցկացման	15.04.2024 – 30.11.2024

	ժամկետ	
3.4	Անցկացման վայր	Երևան (նախնական՝ Փարաջանովի տուն թանգարանը, Գաֆեսճյան արվեստի կենտրոնը, հնարավոր են այլ տարբերակներ ևս)
3.5	Ակնկալվող արդյունքներ	Սերգեյ Փարաջանովն համաշխարհային կինոյի այն եզակի հեղինակներից է, որը ռադիկալ ազդեցություն է ունեցել կինոլեզվի զարգացման և նոր խորությունների բացահայտման գործում: Փարաջանովի դերը համաշխարհային արվեստի ընդհանրության մեջ միանշանակ է և աներկբա, իսկ որքանո՞վ է մեր փոխհարաբերությունը նրա ստեղծածի հետ հստակ և յուրացված: Հաղորդշարը կնպաստի այդօրինակ կարևոր հարցադրումների պատասխանները գտնելուն, Փարաջանովի ժառանգությունը ըմռնելուն, և որ ամենակարևորն է՝ Փարաջանովին միայն նեղ մասնագիտական շրջանակների հետաքրքրվածությունից դուրս բերելուն և հանրությանն ավելի մոտ դարձնելուն:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Ծրագրի քանակական ցուցանիշները՝ 1. 12 մասից բաղկացած մշակութային հաղորդաշար, յուրաքանչյուրը՝ 45-50 րոպե տևողությամբ: 2. Հաղորդաշարի հեռարձակում ԲՈՒՆTV հանրային հեռարձակողի միջոցով, որը հասանելի է Երևանում մուլտիպլեքսի, իսկ մարզերում՝ կաբելային վերահեռարձակող ընկերությունների միջոցով: 3. Հաղորդումների տարածում «:Բուն» հիմնադրամի սոցիալական հարթակներով (www.boon.am; Facebook; YouTube; Instagram), որոնց միջոցով հաղորդումները հասանելի կլինի առնվազն 30,000 համացանցի օգտատիրոջ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011052785 ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Բուն»գիտամշակութային հիմնադրամ
ք. Երևան, Մաշտոցի 40ա, բն. 34

«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930049723220100 ՀՎՀՀ 02623069
Հեռ՝ 077110027

Տնօրեն՝
Գ. Գասպարյան
Կ.Տ.

Հավելված N 2
«15» «04» 2024 թ.
N ՄՇԴ-184-2024 թ. պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Փարաջանովը և մենք» ծրագրի կազմակերպման ծախսերի

	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	*Կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝*				*14 978,0*
	Հեղինակ-վարող, Ռեժիսոր	հաղորդում	12	300000	3 600,0
	Համահեղինակ-վարող	հաղորդում	12	100000	1 200,0
	Համահեղինակ-վարող	հաղորդում	12	100000	1 200,0
	Պրոդյուսեր	հաղորդում	12	100000	1 200,0
	Ստեղծագործական խմբագիր	հաղորդում	12	60000	720,0
	Օգնական-ադմինիստրատոր	հաղորդում	12	50000	600,0
	Օպերատոր	հաղորդում	12	58500	702,0
	Օպերատոր	հաղորդում	12	42000	504,0
	Օպերատոր	հաղորդում	12	33500	402,0
	Նկարահանումների տեխնիկական օժանդակության աշխատանքներ	հաղորդում	12	65000	780,0
	Հնչյունային ռեժիսուրային հետ կապված աշխատանքներ	հաղորդում	12	62500	750,0
	Հաղորդումների տեխնիկական խմբագրում	հաղորդում	12	80000	960,0
	Հաղորդումների վերջնական մոնտաժ, գունաշտկում	հաղորդում	12	80000	960,0
	SMM	հաղորդում	12	50000	600,0
	Հաղորդման շապիկի դիզայն	հաղորդում	1	400000	400,0
	Հաղորդման շապիկի անիմացիա և գրաֆիկա	հաղորդում	1	400000	400,0
2	*Հեղինակային իրավունքների ձեռքբերում*	հաղորդում	12	20000	**240,0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				***15 218,0***
	ԱԱՀ*				**3 043,6**
	ԱՄԲՈՂՋԸ				**18 261,6**

**** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե***

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011052785 ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Բուն»գիտամշակութային հիմնադրամ
ք. Երևան, Մաշտոցի պող. 40ա շենք, բն. 34

«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930049723220100 ՀՎՀՀ 02623069
Հեռ՝ 077110027

Տնօրեն՝
Գ. Գասպարյան

Կ.Տ.

Հավելված N 3
«15» «04» 2024 թ.
N ՄՇԴ-184 -2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

<< ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«15» «04 2024 թ.
N ՄՇԴ- 184 -2024 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2024 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)
բովանդակային վարչության « » « » 2024թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2024 թ.-ի թիվ N- ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝
_____

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝
_____

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝
_____